ԿՐԹԱԿԱՆ

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՍԿՍՎԵՆ ՀՈՒԼԻՍԻ 3-ԻՑ

## ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԹՎՈՎ՝ 45 ՀԱԶԱՐ ԴԻՄՈՒՄ

*«Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի» տեղեկատվության համաձայն, ազգային միասնական քննությունները կսկսվեն հուլիսի 3-ին՝ «Վրաց լեզվի եւ գրականության», կավարտվեն հուլիսի 26-ին՝ «Ֆիզիկայի» քննությամբ:*

Կենտրոնի տեղեկություններով, միասնական քննություններին գրանցվել է ռեկորդային թվով՝ ավելի քան 45 000 դիմորդ, ավելի քան 30 000 ուսանող ցանկություն է հայտնել մասնակցել ուսանողական դրամաշնորհային մրցույթին, իսկ ընդհանուր մագիստրոսական քննության գրանցում է անցել ավելի քան 10 000 թեկնածու:

Ինչ վերաբերում է ընտրովի առարկաների քննությանը, ապա 22 200 դիմորդ ընտրել է «Պատմություն», 15 700-ը՝ «Մաթեմատիկա», 3 600-ը՝ «Կենսաբանություն», 2 600-ը՝ «Քիմիա», 20 200-ը՝ «Աշխարհագրություն», 700-ը՝ «Ֆիզիկա», 1 300-ը՝ «Գրականություն», 2 000-ը՝ «Քաղաքացիական կրթություն» եւ ավելի քան 300-ը՝ «Կերպարվեստ ու կիրառական արվեստ» առարկաները:

«Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնը» զգուշացնում է դիմորդներին, որ մինչեւ բողոքարկման արդյունքների հրապարակման հաջորդ օրը կարող են փոփոխություններ կատարել կրթական ծրագրերի ցանկում: Կոնկրետ թիվը կիրապարակվի օգոստոս ամսին:

Նշենք, որ 2023 թվականին Վրաստանում, ընդհանուր առմամբ, կբացվի 24 քննական կենտրոն: Կենտրոնները կգործեն Թբիլիսիում, Բաթումիում, Զուգդիդիում, Քութայիսիում, Փոթիում, Ախալցիխեում, Գորիում, Օզուրգեթիում, Ռուսթավիում, Թելավիում եւ այլ վայրերում: Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի տվյալներով, այս տարի քննական կենտրոն առաջին անգամ կբացվի Ամբրոլաուրիում:

«Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնը» քննվողներին տեղեկացնում է նաեւ, որ քննությունների հետ կապված Covid-ի կանոնակարգերն այս տարի այլեւս չեն գործում: Ինչպես այլ վարակիչ հիվանդություններ ունեցող անձանց դեպքում, նույնականացված հետազոտվողները պետք է կապ հաստատեն կենտրոնի թեժ գծի հետ՝ (995 32) 2 47 33 33 հեռախոսահամարով եւ համապատասխան բժշկական փաստաթղթեր ներկայացնեն «Գնահատման եւ հետազոտությունների ազգային կենտրոն» (Մինդելու N 9) նախօրոք: Քննությունը կանցկացվի հատուկ կազմակերպված քննական հատվածում»,- ասված է «Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի» հաղորդագրության մեջ:

# ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ ՆՇԵՑԻՆ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ

## ԱՅԴ ՕՐԸ ՇԱԲԱԹՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՀԱՆՁՆՎԵՑԻՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԸ

*Հունիսի 29-ին Թբիլիսիի Հավլաբարի թաղամասի Վիրահայոց թեմի «Սուրբ Էջմիածին» եկեղեցում նշվեց Թարգմանչաց տոնը՝ Սուրբ Սահակ Պարթեւի եւ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի հիշատակը:*

Եկեղեցում մատուցվեց տոնական Սուրբ Պատարագ, որին ներկա էին Վիրահայոց թեմի հայերենի ուսուցման «Սուրբ Գրիգոր Նարեկացի» եւ «Սուրբ Եղիա մարգարե» վարժարանների սաները:

Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Եվգենյա Մարկոսյանը «Սուրբ Գրիգոր Նարեկացի» շաբաթօրյա վարժարանի 2022-2023 ուսումնական տարվա շրջանավարտներին բաժանեց վարժարանի Ավարտական վկայականները:

Հիշեցնենք, որ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում գործում են երկու մեկօրյա դպրոցներ, որտեղ ցանկացողները կարող են սովորել մեսրոպատառ հայերենը եւ հայ գրականությունը, ծանոթանալ Հայոց եկեղեցու եւ Հայ ժողովրդի պատմություններին: Ուսուցումն այստեղ երկամյա է: Տասը եւ բարձր տարիքի մայրենին չտիրապետող հայորդիները այս դպրոցներում հնարավորություն ունեն սովորելու հայերեն:

Ուսումնառությունն անվճար է:

# ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՄԵԾԱՐԵՑԻՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻՆ

*2023 թվականի հունիսի 24-ին, «Լուսե ուղենիշ» աբովյանական օրեր Թբիլիսիում» ծրագրի շրջանակներում Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնը լեփլեցուն դահլիճը հյուրընկալեց Երեւանից ժամանած պատվիրակությանը:*

«Լուսե ուղենիշ» աբովյանական օրեր Թբիլիսիում» միջոցառումը նվիրված էր Աբովյանի անհետացման 175-րդ տարելիցին եւ Երեւանի Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանի հիմնադրման 85-ամյակին: Այդ նպատակով կենտրոնում ցուցադրվեցին տուն-թանգարանի պատմությունը ներկայացնող ցուցանմուշներ:

Միջոցառումը հագեցած էր գեղեցիկ քնարական հավելվածներով:

Միջոցառումն ամփոփեց Տեր Կիրակոս քահանա Սիմոնյանը: Նա փոխանցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի օրհնությունն ու բարեմաղթանքները:

Վերջում Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանի տնօրեն Սյուզաննա Խոջամիրյանը «Աբովյանական օրերը Թբիլիսիում» միջոցառումը կյանքի կոչելու համար շնորհակալագրեր փոխանցեց «Հայարտուն» կենտրոնի տնօրեն Եվգենյա Մարկոսյանին եւ հեռուստալրագրող Էդգար Բարսեղյանին ծրագրի իրականացմանը ցուցաբերած աջակցության համար:

# ԲԱՐԻ ԵՐԹ, ԻՄ ՍՐՏԻ ԴԱՍԱՐԱՆ

*2020 թվականի հունվարն էր, երբ՝ որպես վրաց լեզվի ուսուցչուհի, մտա Օրոջալարի հանրային դպրոցի 9-րդ դասարան: Նրանք յոթն էին, յոթ տարբեր մարդիկ, յոթ տարբեր բնավորություններ:*



3 տարիների ընթացքում բազում դժվարություններ հաղթահարեցինք, այդ թվում՝ կորոնավիրուսի համաճարակ, ուսումնական գործընթացում առաջացած խնդիրներ: Բայց դժվարությունները մեզ ավելի մտերմացրին, ավելի նպատակասլաց ու ուժեղ դարձրին: Հիմա այդ յոթ տարբեր անհատականությունները կանգնած են նոր կյանքի շեմին՝ իրենց երազանքներով ու սպասելիքներով:

Իմ սիրելի աշակերտներ, իմ սրտի դասարան, շնորհավորում եմ ձեզ այսքան սպասված ու այսքան հիշարժան օրվա առթիվ: Շնորհակալ եմ, որ փոխեցիք ուսուցչի մասին իմ պատկերացումները, ինձ որպես ձեզ ընկեր ընդունեցիք:

Ես չեմ պատկերացնում իմ մանկավարժական հետագա գործունեությունն առանց ձեզ, դպրոցն առանց ձեր ներկայության: Դուք իմ հենարանն էիք, ու ես ամեն մի գաղափարս վստահում էի ձեզ՝ ակնկալելով ու ստանալով ձեր աջակցությունը դրանք իրականացնելու հարցում: Իսկ հիմա դուք գնում եք, ու ես մնում եմ առանց հենարանի...

Սիրելիներս, հիմա ես պարզ ճակատով եմ ճանապարհում ձեզ մեծ կյանք ու վստահ եմ՝ կհպարտանամ ձեր ձեռք բերած հաջողություններով: Մենք կարողացանք շատ խոչընդոտներ հաղթահարել այս տարիների ընթացքում, իհարկե, այս հարցում մեր կողքին միշտ ձեր շատ սիրելի դասղեկ, իմ սիրելի գործընկեր հարգելի Վարդուհին էր:

Գիտեմ, որ բոլորդ էլ ձեր կրթությունը շարունակելու եք Թբիլիսիի ու Երեւանի բարձրագույն ուսումնական հաստատություններում, եւ ցանկանում եմ, որ հստակ քայլերով գնաք ձեր երազանքների հետեւից, երբեք չհրաժարվեք դրանցից: Ցանկանում եմ, որ դառնաք մեր երկրի արժանի քաղաքացիներ, լավագույն մասնագետներն աշխարհում:

Բարին ընդ ձեզ, սիրելիներս, թող բարի լինի երազանքներով բացվող ձեր կյանքի նոր արշալույսը: Ամենազոր Արարիչը լինի ձեր կյանքի ուղեկիցը: Աստված պահի ու պահպանի ձեզ: Ձեզ շատ կկարոտեմ, ու վստահ եղեք, որ ձեր տեղը ոչ մեկը չի կարող զբաղեցնել իմ սրտում, դպրոցում ու հասարակության մեջ:

***ԱՐՄԵՆՈՒՀԻ ՊՈՂՈՍՅԱՆ***
***Նինոծմինդայի մունիցիպալիտետի Օրոջալարի հանրային դպրոցի վրաց լեզվի ուսուցչուհի***

# ԹԲԻԼԻՍԻԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱՆՔ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

*...Ահա եւ իրականացավ մեր՝ Քվեմո Քարթլիի տարածաշրջանի Բոլնիսիի մունիցիպալիտետի թիվ 2 հանրային կրթօջախի 7-րդ դասարանի սաների փոքրիկ երազանքը. էքսկուրսիա՝ Թբիլիսիի տեսարժան վայրեր:*



Հավլաբար թաղամասում գտնվող Սուրբ էջմիածնի եկեղեցու բակում մեզ դիմավորեց Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնի զբոսավար Էդիտա Զոհրաբյանը, ում իրավամբ կցանկանայինք «Վրաստան» թերթի միջոցով հայտնել մեր շնորհակալությունը, որովհետեւ հենց նա ուղեկցեց մեզ ամբողջ օրվա ընթացքում:

Ապա եղանք Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցի: Այս հինավուրց տաճարում ոչ միայն պատարագի մասնակիցը դարձանք, այլ նաեւ մեր պատմության դրվագներին մերձեցանք՝ Հովնաթանյանների եւ Գեւորգ Բաշինջաղյանի որմնանկարներ եկեղեցում, իսկ գավթում՝ Սայաթ-Նովայի շիրիմ ու նաեւ մեր անվանի հայորդիների տապանաքարեր... Ապա բարձրացանք մեր Մեծաց մեծերի թբիլիսյան հանգրվանատեղին՝ Հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոն՝ Հովհ. Թումանյան, Րաֆֆի, Նար-Դոս, Գ.Սունդուկյան, Ջիվանի, Մակար Եկմալյան եւ այլք: Նայելով այդ լուռ, համեստ շիրմաքարերին, լցվեցինք աներեւակայելի թախիծով՝ միաժամանակ վեհանալով ու հպարտություն զգալով:

Հաջորդ հասցեն Մեյդան թաղամասից Սոլոլակ տանող ճանապարհն ու Թումանյանական հետքն էր: Տեսանք այն շենքերը, որտեղ ժամանակին ապրել են Թբիլիսիում ծնված հայտնի գործիչներ՝ հռչակավոր աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը, Օրբելի եղբայրները, Նար-Դոսը եւ ուրիշներ: Բայց անասելի զգացումներ ապրեցինք՝ մտնելով թումանյանական «Վերնատան» պատմական շենքը, որտեղ առ այսօր զգացվում է Ամենայն Հայոց բանաստեղծի շունչը: Այստեղ մեր առջեւ բացվեցին Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնի դռները, որտեղ մենք՝ դպրոցի սաներն ու ուսուցիչները նախկինում հայտնի հեռուստառադիոլրագրող, այսօր «Թումանյանի տան» գիտաշխատող Գոհար Մազմանյանի կողմից լսեցինք Հովհ.Թումանյանի ապրած տարիների մասին: Հոգեհարազատ այս միջավայրում՝ ողողված թումանյանական շնչով, ասես մեզ հետ էին քայլում Մեծն Լոռեցու ստեղծագործությունների հերոսները.

- Էստի համեցեք, էստի համեցեք... /«Գիքորը»/.

- Բարի աջողում, ուստա փիսո... /«Շունն ու կատուն»:

Այս ամենից ոգեւորված Բոլնիսիի թիվ 2 հանրային հայկական կրթօջախի 7-րդ դասարանի սաները հենց Թումանյանի հյուրասենյակում արտասանեցին «Շունն ու կատուն» բալլադը եւ Մեծն Լոռեցու հայտնի քառյակները: Դպրոցի սաների համար հաճելի անակնկալ էր նաեւ միջոցառման ավարտին ստանալ վիրահայ հայտնի բանաստեղծուհի, թարգմանչուհի լուսահոգի Անահիտ Բոստանջյանի գրքերը եւ նրա խմբագրած ու տպագրած «Կամուրջ» տարեգրքի տարբեր համարները, որոնք տրամադրել էին նրա դուստրերը:

Համոզված ենք, որ այս անմոռանալի տպավորություններով լի օրը մեկընդմիշտ կմնա՝ որպես գեղեցիկ հուշ, յուրաքանչյուրիս կյանքում:

Երախտագիտության խորին զգացումով շնորհակալություն ենք հայտնում նաեւ մեր սաների ծնողներին, ուսուցիչներին եւ դպրոցի տնօրինությանը այսպիսի երջանիկ օր պարգեւելու համար:

***ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ***
***Ք.Բոլնիսիի թիվ 2 հանրային դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի***

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ՔԱՂՑԸ՝ ՇԱՔԱՐԱԽՏԻ ԲՈՒԺՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑ



***Բոլորովին պատահաբար պարզեցի, որ արյան մեջ շաքարի պարունակության հետ հիմնախնդիրներ ունեմ: Բժիշկները մի ողջ ցուցակ կազմեցին, թե ինչը կարելի է ուտել, ինչը՝ ոչ: Էլ չեմ խոսում դուրս գրված դեղորայքի մասին, որի ընդունումը նույնպես պարտադիր է: Անկեղծ ասած, սահմանափակումներով ապրելու բնավորություն չունեմ, չնայած տվյալ դեպքում չգիտեմ ինչպես վարվել: Գուցե օգնեք...***

***Գ. ՍԻՄՈՆՅԱՆ***
***Բաթումի***

Դուք կարող եք օգտվել գիտական վերջին հայտնագործություններից: Ուսումնասիրություններից հետո մասնագետները կարծիք են հայտնել, որ շաքարախտի դեմ պայքարում լրջագույն միջոց է քաղցը: Մի քանի հարյուր կամավորների ուսումնասիրությունը հանգեցրել է նման եզրակացության: Ուսումնասիրություններն անցկացվել են Անգլիայում, գիտական մի ինստիտուտում, որտեղ զբաղվում են շաքարախտի եւ շաքարի մակարդակի հետ կապված այլ հիվանդությունների հետազոտմամբ: Փորձելով գտնել շաքարախտի դեմ արժեքավոր միջոց՝ գիտնականները հայտնաբերել են ամենօրյա սննդի կալորիականության նվազեցումը: Եթե օրական սննդի կալորիականությունը նվազեցվի մինչեւ 800 կալորիա, հնարավոր է լուրջ հարված հասցնել շաքարախտին:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ԿՍՆՎԵՆՔ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՄՍՈ՞Վ



***Վերջերս լսեցի, որ գիտնականներն աշխատում են արհեստական միս ստանալու ուղղությամբ: Անկեղծ ասած, չեմ պատկերացնում միսը ինչպե՞ս կարող է լինել արհեստական, կամ այդ միսը օգտակար ինչ վիտամիններ կարող է պարունակել: Որքանո՞վ է այդ տեղեկատվությունը ճիշտ:***

***Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ***
***Ախալքալաքի***

Ամերիկյան երկու ստարտափները՝ «Upside Foods»-ը եւ «Good Meat»-ը, պաշտոնական թույլտվություն են ստացել ԱՄՆ-ի գյուղատնտեսության նախարարությունից լաբորատոր պայմաններում թռչնի բջիջներից աճեցված հավի արհեստական միս վաճառելու համար: Ընկերություններն առաջինն են, որոնք ստացել են իրենց արտադրանքը վաճառելու իրավունք, տեղեկացնում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով «Lenta.ru»-ին:

Նշված ստարտափները այլընտրանքային միս կմատակարարեն Վաշինգտոնի եւ Սան Ֆրանցիսկոյի ռեստորաններին: Սկզբում ընկերությունները նախատեսում են տարեկան արտադրել մինչեւ 50 000 ֆունտի մսամթերք: Ավելի ուշ, նախատեսվում է ընդլայնել արտադրությունը մինչեւ տարեկան 400 հազար ֆունտի եւ ապրանքները վաճառել առեւտրի խոշոր կետերին:

«Upside Foods»-ը եւ «Good Meat»-ը արտոնագիր են ստացել նաեւ ԱՄՆ-ի Սննդամթերքի եւ դեղերի վարչությունից իրենց արտադրանքն օրինական վաճառքի հանելու համար: Վարչությունից հաստատել են, որ երկու կազմակերպությունների արտադրանքն էլ անվտանգ է ուտելու համար: Արտադրողներն իրենց հերթին նշում են, որ իրենց արտադրանքի համը ոչնչով չի տարբերվում սովորական հավի մսից:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

## ԻՆՉՊԵ՞Ս Է ԾԱԳԵԼ «ԱԼՈ» ԲԱՌԸ

1877թ. օգոստոսի 15-ին, ամերիկացի գիտնական, ավելի քան 1000 գյուտերի հեղինակ Թոմաս Էդիսոնն առաջին անգամ առաջարկեց հեռախոսով դիմելու համար գործածել «ալո» բառը: Էլեկտրական լամպը, ձայնագրիչը, ջերմաէլեկտրակայանը, հեռախոսային հաղորդիչը Էդիսոնի գյուտերից են:

Մեծ գյուտարարը դեռ 10 տարեկան էր, երբ արդեն տնային լաբորատորիայում ինքնուրույն փորձեր էր կատարում: Հետագայում արդեն նա բեռնատար վագոնում լաբորատորիա սարքավորեց եւ սկսեց փորձեր անել: Շուտով Էդիսոնը ստեղծեց Կոնգրեսի քվեների ինքնաշխատ հաշվիչ, որով ոչ ոք չհետաքրքրվեց: Երկրորդ հայտնագործությունը սակարանում բաժնետոմսերի տատանվող կուրսը հեռավորության վրա հաղորդելու հեռագրական ապարատն էր՝ հեռագրական ինքնապատասխանիչը:

1869 թ. իր հայտնագործած հեռագրության համար ստացած դրամական խոշոր պարգեւով Էդիսոնը հետազոտական լաբորատորիա հիմնեց, իր իսկ խոսքով՝ «գյուտերի ֆաբրիկա»:

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

## ԽԱՆԴ. ԸՆՏԱՆԻՔԻ ՔԱՅՔԱՅՄԱՆ ԱՄԵՆԱԶՕՐ ՊԱՏՃԱ՞ՌԸ



***Խմբագրության փոստով ստացվող էլեկտրոնային (vrastan.press@gmail.com) նամակներից այս անգամ առանձնացրինք երկուսը՝ կնոջից եւ տղամարդուց: Կոնկրետ ստորագրություններով այդ նամակներում ներկայացված իրավիճակները, առաջին հայացքից կարծես տարբերվում են, թեեւ ավելի խոր մոտեցման դեպքում, ընտանեկան հարաբերությունների ճգնաժամի հիմքում խանդն է՝ կնոջը ամուսնու եւ ամուսնունը՝ կնոջ նկատմամբ: Արդյունքում՝ երկու ընտանիքներն էլ հայտնվել են քայքայման եզրին եւ, հատկանշանակ է, դիմակայող կողմերն իրենց ճիշտ են համարում եւ փոխզիջման դիմելու մտադրություն չունեն:***

***Ստորեւ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում վերոնշյալ իրավիճակի կարգավորման հնարավոր տարբերակներ, որոնք կարելի է օգտագործել...***

***Սակայն ո՞րը եւ ինչպե՞ս՝ ինքներդ եք որոշելու:***

Կյանքում միշտ չէ, որ ամեն ինչ մեր ուզածով է լինում: Հատկապես ընտանեկան կյանքում կոնֆլիկտներ լինում են ամենատարբեր պատճառներով: Իսկ դրանց առաջացման ամենաhզոր պատճառներից մեկը խանդն է:

Երբ մարդը ամուր կապվում է ինչ-որ մեկի հետ կամ ինչ-որ բանի, սկսում է զգուշանալ ու վախենալ, թե կարող է զրկվել նրանից, ինչն իրեն բաժին է հասել: Կապ չունի՝ դժվարությա՞մբ, թե՞ հեշտությամբ: Չնայած դժվարությամբ բաժին հասածի դեպքում ավելի բարդ է լինում: Հոգեբաններն ասում են, որ գոյություն ունի կապվածության տեսություն, որը նկարագրում է մեկ ուրիշ մարդու հետ ամուր կապվածության երեք տեսակ: Դրանցից մեկը հանգիստ կապվածությունն է, որը ենթադրում է ինքնավստահության, սեփական արժանապատվության եւ զուգընկերոջ հետ սիրային հարաբերություններից ստացած բավականության ու բավարարվածության աճ: Մտահոգված կապվածություն, որն իր եւ զուգընկերոջ նկատմամբ անհանգիստ եւ անհամարժեք վերաբերմունքն է: Երրորդն այն է, որ այն զուգընկերները, որոնց համար բնութագրական է խուսափման նրբերանգը, ջանում են ձեռնպահ մնալ չափազանց ուժեղ հուզական կապվածությունից, ինչը մարդուն դարձնում է խոցելի:

Վախը եւ սեփականատիրական զգացմունքները կարող են լինել սիրային հարաբերությունների բաղկացուցիչ մաս: Յուրաքանչյուր մարդ ցանկանում է, որ իր սիրելին պատասխանի փոխադարձ սիրով եւ սիրի միայն իրեն: Հաճախ նույնիսկ վախենում ենք մերժում ստանալ սիրելի մարդուց, իսկ առավել շատ վախենում ենք կորցնել սերն ինչ-որ մեկի պատճառով: Անգամ այն դեպքում, եթե զուգընկերն ինքն է հորինում կամ ստեղծում հանգամանքներ, որոնք արտահայտում են զուգընկերոջ՝ մի երրորդ անձի հանդեպ ունեցած հետաքրքրության մասին, ի հայտ է գալիս խանդը:

Խանդ գոյություն ունի ցանկացած մարդկային հարաբերություններում եւ այն խնդիրների թվին է պատկանում, որոնք զուգընկերները պետք է քննարկեն բացահայտ: Խանդը երբեմն դուրս է գալիս վերահսկողությունից, ի հայտ է գալիս սեփականատիրության զգացումը, ինչը եւս շատ վտանգավոր է: Դա տեղի է ունենում հատկապես մտահոգված կապվածության դեպքում: Հաճախ խանդոտ մարդիկ ի վիճակի չեն լինում փոխել իրենց վարքն ու զուգընկերոջ հանդեպ տածած զգացմունքներով տարվածությունն արդարացված է:

Ամուսիններն իրենց գրեթե ողջ ազատ ժամանակը միասին են անցկացնում, ինչը մի կողմից փոքրացնում է խանդելու հնարավորությունը, մյուս կողմից՝ ավելի է բարդացնում խնդիրը: Եթե խանդն այնուամենայնիվ առկա է, քանի որ ամուսիններից մեկը, ում խանդում են, պարզապես ստիպված է անընդհատ լսել կասկածանք եւ մեղադրանք արտահայտող խոսքեր. ընդ որում՝ նա չի կարող հենց այնպես թողնել ու հեռանալ: Այդ է պատճառը, որ ամուսնական զույգի խանդն առաջնային պատճառներից է, որը քայքայում է ընտանիքը: Բայց երբ զուգընկերն անհիմն խանդում է, երբեք մի փորձեք արդարանալ՝ ի պատասխան անհիմն կասկածների: Խանդի հետ կապված խնդիրների վերաբերյալ համատեղ որոշումներ ընդունեք:

Խանդը երբեմն այն մասին է վկայում, որ հարաբերություններում խնդիրներ են առաջացել, որոնց մատների արանքով պետք չէ նայել: Զուգընկերոջ հանդեպ վերաբերմունքում մի առաջնորդվեք խղճահարությունից դրդված: Եթե ձեր զուգընկերոջ խանդն ու սեփականատիրության զգացումն անհաղթահարելի են, տվյալ փոխհարաբերություններն այլեւս ձեզ թույլ չեն տա լիակատար խաղաղություն զգալ: Զուգընկերոջը շատ սիրելու դեպքում եւս մտածեք՝ կա՞ հարաբերությունների հետագա պահպանման հնարավորություն:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է ասել, որ եթե կա սեր եւ լիարժեք ամուսնական ներդաշնակություն, ապա այդտեղ չեն կարող արմատավորվել խանդն ու անվստահությունը: Ամեն ինչ չափի մեջ է գեղեցիկ:

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ *- Արձակուրդի ժամանակ ի՞նչ ես անելու:*

*- Ինչպե՞ս թե, արձակուրդի ժամանակ էլ եմ աշխատելու:*

☺ *Մայրը՝ որդուն.*

*- Քո յուրաքանչյուր հիմար վարմունքից մի սպիտակ մազ է ավելանում:*

*Որդին՝ նայելով տատին.*

*- Մայրիկ, ինչպե՞ս երեւում է, փոքր ժամանակ դու էլ էիր հիմարություններ անում:*

☺ *Խանութում.*

*- Մի տուփ լավ, սակայն էժան կոնֆետ եմ ուզում:*

*- Աղջկա համա՞ր:*

*Ո'չ, բժշկին եմ տալու:*

*- Պարզ է, որպես շնորհակալությո՞ւն, թե՞ վրեժխնդրություն:*

☺ *- Ինչպե՞ս են գործերդ:*

*- Դե, ի՞նչ ասեմ՝ սեւ կատուները անհիմաստ են համարում իմ ճանապարհը կտրել:*

☺ *Վիճաբանությունից հետո կինը՝ ամուսնուն.*

*- Դու սխալ ես:*

*- Ինչո՞ւ:*

*- Չգիտեմ, այդ մասին դեռ չեմ մտածել:*

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



☞ *Արեք միայն այն, ինչն ամենից շատ եք սիրում: Դա անպայման հաջողություն կբերի:*

***ՉԱՐԼԻ ՉԱՊԼԻՆ***

☞ *Ամեն առավոտ ես նայում էի ինձ հայելու մեջ եւ հարցնում. «Եթե այսօր իմ կյանքի վերջին օրը լիներ՝ կուզեի՞ զբաղվել նրանով, ինչով այսօր եմ զբաղվում»: Եվ եթե պատասխանը մի քանի օր շարունակ լինում էր «ոչ», ես հասկանում էի, որ պետք է ինչ-որ բան փոխեմ:*

***ՍԹԻՎ ՋՈԲՍ***

☞ *Աշխարհում բարեկամությունից ավելի լավ ու հաճելի բան չկա. կյանքից բարեկամությունը բացառելը նույնն է, ինչպես աշխարհը զրկել արեգակի լույսից:*

***ՊԼԱՏՈՆ***

☞ *Մարդը կարող է փոխել իր կյանքը, եթե կարողանա փոխել իր մտածելակերպը:*

***Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***
***Թեթրիծղարո***

# ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԱՆՑԿԱՑՎԵՑ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 33-ՐԴ ՆԻՍՏԸ

*Հունիսի 24-ին Հայաստանի նախագահ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Վահագն Խաչատուրյանի ղեկավարությամբ անցկացվեց հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 33-րդ նիստը:*



Նիստի աշխատանքին մասնակցեցին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, պաշտոնական այլ անձինք:

- «Հայաստան» համահայկական հիմնադրամի համահայկական ընդգրկումն ինքնին հակոտնյա է ցանկացած քաղաքական ազդեցության, նախընտրության կամ միտումի, ջանք ու եռանդ պետք է չխնայել հիմնադրամի գործունեությունը որեւէ քաղաքական շահարկումից կամ կասկածից զերծ պահելու համար,- բացելով նիստը հայտարարեց Հայաստանի նախագահ, հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Վահագն Խաչատուրյանը:

Նա շնորհակալություն հայտնեց նվիրատուներին, հիմնադրամի ցանցին ու աշխատակազմին անձնվեր ու անխոնջ աշխատանքի համար:

Նիստին հիմնադրամի գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանը հանդես եկավ տարեկան զեկույցով՝ ներկայացնելով իրականացված ծրագրերն ու նախագծերի ընթացքը:

Քննարկվեցին հիմնադրամի 2022 թվականի ֆինանսական հաշվետվությունն ու 2023 թվականի տարեկան բյուջեն:

## ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Հունիսի 29-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել ԱՄՆ պետքարտուղարության պատժամիջոցների համակարգման գրասենյակի ղեկավար Ջեյմս Օ’Բրայենի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը զրուցակիցներն անդրադարձյան տարածաշրջանում եւ միջազգային ասպարեզում տեղի ունեցող գործընթացներին, ինչպես նաեւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող տարբեր հարցերի:*

## ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ

*Հունիսի 27-ին Վաշինգտոնում կայացել է Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի եւ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հանդիպումը: Հանդիպմանը քննարկվել են տարածաշրջանային անվտանգության ու կայունության հարցեր, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացը:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆՈՒՄ Է ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

*Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարությունը հունիսի 30-ից դադարեցնում է գործունեությունը: Նորաստեղծ ներքին գործերի նախարարությունը իր մեջ ներառում է նաեւ արտակարգ իրավիճակների նախարարության գործառույթները եւ այդ ոլորտներին առնչվող հարցերը, առաջարկությունները, դիմումներն ու նամակներն այսուհետ կարելի է ներկայացնել ներքին գործերի նախարարություն՝ mia.gov.am էլ. փոստի, ինչպես նաեւ e-request.am էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով:*

## ՀՆԳԱՄՍՅԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ՝ 12,5 ՏՈԿՈՍ

*Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներով, երկրի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2023 թվականի հունվար-մայիս ամիսներին 12,5 տոկոսով ավելացել է, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:*

*Արդյունաբերական արտադրանքի ծավալը այս տարվա հունվար-մայիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 3 տոկոսով:*

*Շինարարության ծավալը 2023-ի 5 ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, ավելացել է 16,7 տոկոսով:*

*2023 թվականի առաջին 5 ամիսներին սպառողական գների ինդեքսը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 5,2 տոկոսով, իսկ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը նվազել է 1,6 տոկոսով:*

## ԱՎԵԼԱՑԵԼ Է ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԹԻՎԸ

### ՎՐԱՍՏԱՆԻ 6 ՔԱՂԱՔՆԵՐԻՑ ԽԱՂԵՐԻՆ ԿՄԱՍՆԱԿՑԵՆ 301 ՄԱՐԶԻԿ-ՄԱՐԶՈՒՀԻՆԵՐ

*Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանի գլխավորած պատվիրակությունն այցելեց Համահայկական ամառային 8-րդ խաղերի մայրաքաղաք Գյումրի, որտեղ մարզային եւ տեղական իշխանության ներկայացուցիչների հետ անցկացրեց աշխատանքային խորհրդակցություն:*

Իշխան Զաքարյանը ներկայացրեց Համահայկական ամառային 8-րդ խաղերի՝ մինչեւ այս պահը կատարված աշխատանքների ընթացքը եւ տվեց համապատասխան հանձնարարականներ՝ կապված Գյումրիում կայանալիք բացման արարողության կազմակերպչական աշխատանքների հետ:

Անդրադառնալով արդեն մեկնարկած աշխատանքների ընթացքին՝ կոմիտեի նախագահը նշեց, որ օր-օրի ավելանում է խաղերին մասնակցելու ցանկություն հայտնած երկրների ու մարզիկների թիվը:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը հուլիսի 15-ն է, որից հետո տեղի կունենա վիճակահանություն: Այս պահի տվյալներով, ամենամեծ պատվիրակությունը կժամանի Ռուսաստանի Դաշնության 18 քաղաքից՝ շուրջ 430 մասնակից, այնուհետեւ Թուրքիայի 5 քաղաքից՝ 374 մասնակից, Վրաստանի 6 քաղաքից՝ 301 մասնակից (Թբիլիսիից՝ 150, Ախալքալաքիից՝ 60, Նինոծմինդայից՝ 40, իսկ Բաթումիից, Փոթիից եւ Ճիաթուրայից՝ սպորտային պարային զույգեր): 247 մասնակից կժամանի ԱՄՆ-ի 10 քաղաքից, 180 մասնակից էլ հայտագրվել է Ֆրանսիայից: Պատվիրակություններ կլինեն Արգենտինայից, Ավստրալիայից, Լիբանանից, Եգիպտոսից:

Հայաստանի մասնակիցների մինչ այժմ գրանցված մարզիկների ընդհանուր թիվը հասնում է 5500-ի: Առաջիկա օրերին կձեւավորվի մարզային շտաբ, որը համակարգելու է խաղերի բացման արարողության կազմակերպչական աշխատանքները:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին խաղերի անցկացմանն ու մասնակիցների կեցությանն առնչվող կազմակերպչական մի շարք հարցեր:

## ԳՈՐԾՈՒՄ Է «ՀԱՅԱՍՏԱՆԻ 100 ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ

*Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը Հայաստանի Ամերիկյան համալսարանի հետ համատեղ իրականացրել է «Հայաստանի 100 հնագիտական հուշարձանները» ծրագիրը, որի նպատակն է փաստագրել Հայաստանի մշակութային ժառանգությունն ու օգտագործել գիտակրթական գործընթացում:*

Ծրագիրը նախատեսված է Հայաստանի 100 հնագիտական վայրերի օդային պատկերների (անօդաչու եւ 3D օրթոֆոտոների) հավաքագրման եւ համապարփակ առցանց շտեմարան ստեղծելու համար, որը ներառում է տեղանքների ճշգրիտ գիտական նկարագրություն, ինչպես նաեւ հուշարձանների օդային տեսանյութեր, անիմացիաներ, քարտեզներ, լուսանկարներ:

Ծրագիրն իրականացվել է 2021 թվականին Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի եւ Հայաստանի ամերիկյան համալսարանի միջեւ կնքված հուշագրի հիման վրա: Այն հնագետ եւ պատմաբան, պրոֆեսոր Գրիգոր Արեշյանի նախաձեռնած նոր հնագիտական ու ազգագրական նախագծի շարունակությունն է:

Ծրագիրը սկսվել է 2021 թվականի սեպտեմբերին եւ իրականություն է դարձել «Սիմոն Մանուկյան» հիմնադրամի նախագահ եւ ՀԱՀ-ի բարերար Քրիստին Սիմոնի աջակցությամբ:

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՑԱԾ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԻՎԻՐՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

### ԻՍԿ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԱԶԳԻ ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՋԵՅՄՍ ԲԱՂՅԱՆՆ Է

*Բոլորովին վերջերս աշխարհում եւս մեկ հայ դարձավ տիեզերագնաց: Հարություն Կիվիրյանը հանձնեց քննությունները ու պաշտոնապես դարձավ երկրորդ հայազգի տիեզերագնացը: Հիշեցնենք, որ առաջինը Ջեյմս Բաղյանն է, որը վերջերս ավարտել է տիեզերական կարիերան եւ իր գործունեությունը ծավալել բժշկության բնագավառում:*



Հունիսի 25-ին Հայաստանում Ռուսաստանի գիտության եւ մշակույթի «Ռուսական տուն» կազմակերպության նախաձեռնությամբ, Հարություն Կիվիրյանը, ով «Ռոսկոսմոսի» ընդհանուր տիեզերական ուսուցման ծրագրի հաջող ավարտից հետո ստացավ տիեզերագնացի վկայական, Հայաստանում հանդիպումներ անցկացրեց տիեզերքով ու տիեզերագնացությամբ հետաքրքրվողների հետ:

Ներկայացնելով իր անցած ճանապարհը՝ 29-ամյա երիտասարդը նշեց, որ ծնվել է Մայկոպում: 2015 թվականին ավարտել է Բաւմանի «Վոյենմեխ» պետական տեխնիկական համալսարանը՝ «Հրթիռաշինություն» մասնագիտությամբ:

2021 թվականի հունվարի 27-ին տիեզերագնացների ընկերության միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ընտրվել է «Ռոսկոսմոսի» տիեզերագնացների ջոկատում փորձարկող տիեզերագնացի մասնագիտությունը ուսանելու, ինչի արդյունքում Յուրի Գագարինի անվան տիեզերագնացների պատրաստման գիտահետազոտական փորձարարական կենտրոնին առաջարկվել էր 2 229 թեկնածուներից «Ռոսկոսմոսի» տիեզերագնացների ջոկատում որպես փորձարկող տիեզերագնաց նշանակել նրանցից չորսին, այդ թվում՝ Հարություն Կիվիրյանին:

Անդրադառնալով Հայաստան կատարած այցին՝ Կիվիրյանը նշեց, որ շատ տպավորված է՝ ծնողները համշենահայեր են, տանը հայերեն են խոսում, ապրում հայկական կենցաղով, հայկական է նաեւ խոհանոցը, բայց այստեղ՝ Հայաստանում, ամեն ինչ շատ ավելի տպավորիչ է:

Տիեզերագնացը նշեց, որ մեծ ցանկություն ունի մինչեւ 2028 թվականը հայտնվել միջազգային տիեզերական կայանում:

Նշենք, որ առաջին հայազգի տիեզերագնացը ամերիկահայ Ջեյմս Բաղյանն է, ով 1989 եւ 1991 թվականներին, «Դիսքավերի» եւ «Կոլումբիա» տիեզերանավերով երկու անգամ տիեզերք է թռել:

Ներկայումս 71-ամյա Ջեյմս Զաղյանը զբաղվում է բժշկությամբ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ «ՎՐԱՍՏԱՆ-IRI GEORGIA» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆԸ

*Հունիսի 22-25-ը Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը բարեշնորհ սարկավագ Գեւորգ Ավետիսյանի ուղեկցությամբ մասնակցեց ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի ֆինանսավորմամբ, միջազգային հանրապետական ինստիտուտ Վրաստան - IRI Georgia «Կառուցի՛ր Վրաստանը» ծրագրի շրջանակներում կազմակերպված հերթական երկխոսությանը:*



Հանդիպումն անցկացվեց Քոբուլեթիի Ջորջիան պալաս (GpH) հյուրանոցային համալիրում: Քննարկման էր դրված «Վրաստանի եվրոպական ապագան» թեման, ինչպես նաեւ կայացան նախագծի առաջին ծրագրերի շնորհանդեսներ:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

# ԹԲԻԼԻՍԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄ Է ԱՄԱՌԱՅԻՆ ՀԱՆԳՍՏԻ ՈՒ ԺԱՄԱՆՑԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ



*Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, քաղաքապետարանը երիտասարդների համար հուլիսին կկազմակերպի սպորտային միջոցառումներ ու արշավներ, իսկ մանկապարտեզի տարիքի երեխաներին կառաջարկի ամառային մանկապարտեզներ:*

Քաղաքապետի խոսքով, ամառային մանկապարտեզները կսպասարկեն մինչեւ 17 հազար երեխայի, իսկ 5 հազար երիտասարդ կկարողանա օգտվել երիտասարդական ծրագրից:

Ամառային մանկապարտեզներում երեխաների գրանցումը հնարավոր կլինի իրականացնել հունիսի 20-30-ը www.kids.org.ge կայքում:

Ամռան ընթացքում Թբիլիսիի ողջ տարածքում կաշխատի 45 ամառային մանկապարտեզ:

Կալաձեն նշել է, որ 18-29 տարեկան երիտասարդները հնարավորություն ունեն մասնակցել տարբեր միջոցառումների (կարթինգ, մինի գոլֆ, հրաձգարան Լիսիի լճի շրջակայքում, լողավազան, ռաֆթինգ եւ արշավներ դեպի Թբիլիսիի ծայրամասեր):

ՖՈՒՏԲՈԼ

# ՎՐԱՍՏԱՆԻ 21 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՐԴ ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ

*Ինչպես արդեն հաղորդել էինք, հունիսի 21-ին Թբիլիսիի, Բաթումիի եւ Քութայիսիի մարզադաշտերում մեկնարկեց մինչեւ 21 տարեկանների Եվրոպայի ֆուտբոլի առաջնությունը: Խմբային մրցաշարի արդյունքներով, «A» խմբում առաջին տեղը զբաղեցրած Վրաստանի 21 տարեկանների հավաքականը պատմության մեջ առաջին անգամ նվաճեց առաջնության քառորդ եզրափակչի ուղեգիրը եւ այդ փուլում իր ուժերը կչափի Իսրայելի հավաքականի հետ*

Հիշեցնենք, որ Վրաստանի հավաքականն իր խմբում 2:0 հաշվով պարտության մատնեց Պորտուգալիայի ուժեղագույն հավաքականին, իսկ Բելգիայի եւ Նիդերլանդների հավաքականների հետ հանդիպումներն ավարտեց ոչ-ոքի, համապատասխանաբար՝ 2:2 եւ 1:1 հաշվով: Վրաստանի թիմը 5 միավորով գլխավորեց խմբի աղյուսակը եւ քառորդ եզրափակչում իր ուժերը կչափի «C» խմբում երկրորդ տեղը զբաղեցրած Իսրայելի հավաքականի հետ:

Քառորդ եզրափակչի մյուս զույգերը Իսպանիա-Շվեյցարիա, Անգլիա-Պորտուգալիա, Ֆրանսիա-Ուկրաինա հավաքականներն են:

Այսօր՝ հուլիսի 1-ին, ժամը 20:00-ին Թբիլիսիի Բորիս Պաիճաձեի անվան մարզադաշտում տեղի կունենա Վրաստան-Իսրայել հանդիպումը: Այդ օրը կկայանա նաեւ Անգլիա-Պորտուգալիա հանդիպումը: Հաջորդ օրը՝ հուլիսի 2-ին, կանցկացվեն Իսպանիա-Շվեյցարիա, Ֆրանսիա-Ուկրաինա հանդիպումները:

Հիշեցնենք, որ մայրցամաքի առաջնության հանդիպումներն անցկացվում են Վրաստանի եւ Ռումինիայի մարզադաշտերում:

# ՖԻՖԱ-Ի ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼԱՆՔ




*Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների վարկանիշային նոր աղյուսակը, որտեղ իրենց արտացոլումներն են գտել Եվրոպայի 2024 թվականի առաջնության որակավորման խմբային փուլի առաջին երեք հանդիպումների արդյունքները:*

Վրաստանի հավաքականը, նախորդ գնահատականի համեմատ, նահանջել է մեկ հորիզոնականով եւ ներկայում զբաղեցնում է 78-րդ տեղը, իսկ Հայաստանի թիմը, ընդհակառակը, առաջադիմել է 7 հորիզոնականով՝ հանգրվանելով 90-րդ տեղում:

Առաջին տասնյակում Արգենտինայի, Ֆրանսիայի, Բրազիլիայի, Անգլիայի, Բելգիայի, Խորվաթիայի, Նիդերլանդների, Իտալիայի, Պորտուգալիայի եւ Իսպանիայի հավաքականներն են:



# ԽԱՉԲԱՌ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1. Հայ մեծ վիպասան Րաֆֆու վեպերից: 5.Հանրահայտ դերասան Խորեն Աբրահամյանի թոռը, երիտասարդ սիրված դերասան ... Լեւոնյան: 8.Մարմնի մաս: 10.Քաղաք Սյունիքի մարզում: 11.Ամիս Հայկական տոմարում: 13.Երաժիշտ, կոմպոզիտոր, «Արցախ» երաժշտության գործիքավորող ... Գեւորգյան: 14.Հայերենի փոքրացուցիչ մասնիկ: 16.Օժանդակ բայ: 17.Հացազգի բույս: 19.Հունական այբուբենի 24-րդ տառը: 20.Ափ չունեցող, անեզր: 23.Կղզի-պետություն Խաղաղ օվկիանոսում: 24.Դաղձ, անանուխ: 25.Օպերային երգիչ ... Պետրոսյան, Սարոյի դերակատարը: 27.Նորածնության արքա ... Շանել: 28.Ռուսների Մայր գետը: 32.Մեղմ, հանգիստ (երաժշտական): 34.Ողջ, ամբողջ (բրբ.): 35.Դերերգ օպերայում: 36.Թամիլական այբուբենի առաջին տառը: 37.Հայերիս սուրբ լեռը: 39.Նվազեմ, նվազես, ...: 40.Միանիշ թիվ: 41.Իգական սեռի ներկայացուցիչ: 42.Գեղեցիկ ծաղիկ: 43.Համադասական շաղկապ: 45.«...ն անցա էն կուռը» (ժող.երգ): 46.Յուրաքանչյուր տարի: 47.Նորածեւ սանրվածք: 50.Մաշտոցյան այբուբենի առաջին տառը: 51.Ժխտական նախածանց: 53.«..., ... երազ լինեմ, թռնեմ մոտդ, մայրիկ ջան» (Ավ.Իսահակյան): 55.Տեսակցություն, այցելություն: 56.Հայ հանրահայտ նկարիչ: 57.Կոմիտասի երգերից: 58.Աչքի մեջտեղում: 60.Դիակ, կենդանու լեշ: 61.Արեւադարձային միրգ: 62.Արշակ Չոպանյանի թերթը Փարիզում:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Աբուլ ..., Մասիս ...: 2.Քաղաք Հայաստանում: 3.Իտալական օպերային թատրոն ... Սկալա: 4.Տեղացի, տեղաբնակ: 5.Հանրահայտ երգիչ ... Շահմուրադյան: 6.Հայոց այբուբենի զինվոր: 7.Ներկա ժամանակի օժանդակ բայ: 9.Նար-Դոսի գրական հերոսուհի: 10.Արահետ, նեղ ճանապարհ: 12.Որսի կենդանի: 15.Լուսանկարչական ապարատ: 16.Ջայլամի տեսակ: 18.Հայկական զինի: 19.Մեծ վիպասան Րաֆֆու «Մի ... հող» պատմվածքը: 21.Սին, փուչ, ունայն: 22.Վրաստանի թագավոր: 26.Իռլանդացի եւ անգլիացի գրող, «Բոռ» գրքի հեղինակը: 29.Առարկայի հատկանիշ: 30.Քաղաք Հունաստանում: 31.Մրցանակ «... Պրի»: 32.Միմոզա ծաղիկը հայեցի: 33.Արեւմտահայ գրող Գրիգոր Զոհրապի նովելներից: 36...., անկախ Վրաստան: 37.Հարավային Օսեթիայի փոխնախագահ ... Թադեեւ: 39.Մեքենայի մաս: 40.Դատարկ, սնոտի, անարժեք: 44.Անգլիացի հայտնի ֆիզիկոս: 46.Գոշենի, դարսենի, կինամոն: 48. ԽՍՀՄ ժողովրդական արտիստ: 49. ԽՍՀՄ հայ հերոս, 89-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի զինվոր: 52.Մկրտիչ Արմենի գրական հերոս: 54.Չծերացած, փափուկ ոսկոր: 55.«... շինիր քո բույնը» (Գ.Դոդոխյան «Ծիծեռնակ»): 58.Ամառային միրգ: 59.Ընտանի թռչուն:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 7.Նայադ: 9.Ենիչերի: 10.Խաթր: 11.Խառատ: 12.Այսպիսի: 15.Տայմ: 16.Երկուս: 17.Սուսեր: 19.Սկուբի: 21.Մարդ: 24.Վեգուվ: 25.Ամբարել: 27.Մեղր: 28.Լեկ: 30.Կաղամբ: 34.Քուռ: 35.Նավատորմ: 38.Դու: 39.Անարար: 41.Շիկնել: 44.Գահ: 45.Տարտամ: 46.Դարպաս: 48.Թութակ: 49.Եթե: 50.Մանդատ: 51.Լեգրան:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Քառասուներեք: 2.Նախատեսում: 3.Շերամ: 4.Գիպսե: 5.Բենիկ: 6.Ուիլիս: 8.Դատարկվել: 13.Պրիմա: 14.Սուկրե: 18.Գիմ: 20.Բարկա: 22.Արամո: 23.Դլե: 26.Բուղա: 29.Կուսակրոն: 31.Ավիշ: 32.Ատակ: 33.Բրդե: 35.Նորամուտ: 36.Մուլասեն: 37.Պաշտում: 40.Ագաթա: 42.Իթակե: 43.Նեպեր: 46.Դալ: 47.Աթա:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445